ՀԱՌ անոր մահուանը, և բոլոր արքու-
նեաց առջև կ'ըսէր, " Թէ զայնպիսի
քաջ և պիտանի և զվաստակաւորն
,, մեր զԱրդան... և կայսր (Յու-
,, նաց) և կամ Հոնաց արքայ բռնու-
,, թեամբ յինէն հանել կամէին, (ես)
,, ամենայն Լրեաց (Պարսից) ուժովս
,, կռուէի, և չտայի հանգչել, մինչև
,, այրէն յիս հանէի,, : Պանծալի վկայ-
ութիւն և արժանաւոր համարմունք.
բայց ափսոս, որ անխոհեմութեամբ
կորուսիր զայնպիսի պիտանի մարդն,
զոր միայն իր ՀՇմարիտ սիրելի հայրե-
նիքն և եկեղեցին անկորուստ պահեն
մինչև ցայսօր :

Արդան նահատակութեանն ատեն
գոնէ յինամեան պիտի ըլլար. իրեն
ժառանգ արու զաւակ չթողուց, անոր
համար Ամիկոնէից տերութիւնն ան-
ցաւ իր Հմայեակ եղբօրն. որ նոյնպէս
քիչ ատենէն նահատակուելով, յա-
ջորդեց անոր որդին հռչակաւոր կըտ-
րիճն Ահան, յետ դարձին 'ի Պարս-
ից. բայց դուստր մը ուներ Արդան՝
իր հօրը և իր գեղեցկութեան պատ-
ՀԱՌԱՒ կրկին անուամբ կոչուած, Վար-
դենի և Շուշանիկ, որ Արքաց բգեշխին
կամ Պուզարաց նահապետին Ազ-
գենի տիկին եղաւ, և անոր անգութ
ձեռքով նահատակուեցաւ, երկայն և
սքանչելի համբերութեամբ և խմաս-
տութեամբ, յայտնի ցուցընելով որ
դուստր է Արդանայ և թոռնեայ Ա-
հակայ, որոց փառք մ' այլ աւել-
ցուց, մեր եկեղեցւոյ տօնելի վկայու-
հեաց պարծանք ըլլալով, և ցուցած ա-
րութեամբն՝ ոչ պակաս քան զքաջա-
մարտիկ սուրբ գունդն Արդանանց :

Արդանայ անգին մարմինը, ան-
շուշտ հաւատարիմ Ամիկոնեանքն՝
չթողուցին աւար Պարսից, այլ իբրև
պանծալի նշան և դրօշ հայրենեաց՝
քաջաբար վերուցին : Լշխարքն զանա-
զան տեղ ցրուեցան, և աւելի 'ի Համ-
շէն, ուր կու յիշուին և 'ի սկիզբն ԺԴ
դարու : Այլ Ագին հայրենեաց, հա-
ւատարիմն Հայաստան, որ իր քաջա-
նշան որդւոյ վարձու և անմահութեան
մէկ մէկ անակնկալ և վսեմական բան
կամ անուն կու հնարէր, յափշտակեց
Արդանայ նշխարաց մէջէն այն թանկ
գլուխը՝ որ զինքը դնելով բոլոր Հայ
աշխարհին և եկեղեցւոյ վրայ՝ աւելի
բարձրացուց զանոնք, և այն ջաջուա
ալը՝ որ երեսուն տարի արևելից և ա-
րևմտից մէջ քաջագոյն և սրբագոյն
վարիչ էր բանակաց, յաղթութեանց
վճռահատ, և պատկաց հաւաքող, ա-
ռաւ դրաւ՝ անոր մարմնով մայրենի նա-
խահաւուն և հոգւով հօրն՝ հանգստա-
բանին մէջ, Ա. Ուսաւորչի նշխարաց
քով... Եպուհ ՇԵրան սրբազան սա-
ղերուն մէջ միաբանեցան երեք վեհա-
գոյն նշխարք և յիշատակք և ա-
տուաձափառ նահատակքն Հայոց.
ԳՐԻԳՈՐ, ՏՐԴԱՏ, և ՎԱՐԴԱՆ :

Հ. Ղ. Մ. Ա.

Հին Քնար

Քարոզ (գանձ)
Սրբոց Վարդանանց :

Աշտապայծառ լոյս գերազանցեալ
. . . . . .

Որ զամենայն յամենայնի ընուս ա-
ռատապէս, արարեր զիմանալի զօրս վե-
րինս քեզ 'ի հաճութիւն. հաճեցար
և 'ի մարդկանէ առնուլ սպասաւորս և
փառաբանիչս անուանդ քում սրբոյ,
ընդ որս և 'ի շառաւիղէ մերոյն համայ-
նից հօրն լուսոյ՝ զԱջն Արդան հան-
դերձ իւրայովքն. զորս կարգեցեր 'ի
զօրս վերինս գերապանձ լուսով զար-
դարեալ. ընդ որս Լտոմեանց զորացն
յայտնապէս տեսեալ 'ի վերուստ ի-
ջեալ պսակ լուսոյ բոլորեալ : Լնկալ
Տէր՝ զաղաչանս միաբան ժողովելոյս
քեզ 'ի հաճութիւն. աղաչեմք :

Սեմական վիպասանութիւն պատ-
մաբանի ձեր գործ հանդիսի, Ասկդ
Արդան, արի, երջանիկ, հանդերձ
միախումբ ընդ քեզ վառելովք, թիւ

հազարաց և երից տասանց հանդերձ վեցեկի թուով. լիակիր սիրով վառեալ 'ի սէրն Աստուծոյ, հանձարական ձեր ի մաստութեամբ, մաքուր անձամբ, մաքրափայլ մտօք, մաքրազարդից գոլ հանդիսակից, արժանաւորք յաւէտ գովութեան, տիրապէս հաճոյք Աստուծոյ։ — Ընկալ, և այլն։

Ստացայք ձեզ անուն քաջութեան յերկինս և յերկրի, քաջ զօրականք, ընտրեալք Աստուծոյ. որք ըստ հրամանի փրկչին Յիսուսի սպառազինեալք՝ մեծաւ հաւատովք, բարձեալք զխաչն տէրունական, յուսով հետևեալք ըզհետ խաչելոյն, սուսերք Հոգւոյն, բանիւ բարձրելոյն ամրացուցեալք զմէջս իմանալիս, կրկին մարդով կրկնակի վառեալք որպէս զքաջք 'ի պատերազմի, վանեալք զգունդս լեգէոնաց հակառակորդացն Ճշմարտութեան։ Ընկալ, և այլն։

Լական լուսոյն հետևեալք՝ յերկրէ յերկինս բռահ կազմեալ, վասն Ճանապարհին Ճշմարտութեանն. Ճամբարապատ Ճանապարհ հորդեալք, զիարդախութիւն ունայնախոհացն՝ արդարութեանն ընտրանաւ յայտնեալ, սուր երկսայր ունելոք բարձեալք, վրիժապարտ ազգին վատշուէր 'ի մաքառումն պատրաստական. զծաղկածին գաշտն Ս ատնական՝[1] կարմրածաղիկ արեամբ՝ ձեր ներկեալ, արգասաւոր ձերով հանդիսիւ զարդարելով զբամբիշ Քրիստոսի։ Ընկալ, և այլն։

Սուրբք և սիրեցեալք և Ճշմարիտ զօրականք ընտրեալք, ըստ հաճոյից Տեառն պատրաստեալք, զբարիոք մարտն մարտուցեալք 'ի յաղթական ձեր պատերազմի, զբարեբիոնն ձեր մնայանակի արժանապէս յանձին ընկալեալք, որպէս զքաջ յաւէտ նահատակք աբրիական ձեր պատերազմաւ թեւակոխեալք 'ի վերնասիոնն՝ 'ի կենդանւոյն քաղաք Աստուծոյ, 'ի պօղոսեան մայրն առաքելոյ, քաղաքակիցք գտայք հանդիսի. բարեխօս լերուք առ Տէր վասն տօնողացս զյիշատակս ձեր, զօրականք ընտրեալք։ Ընկալ, և այլ։

Այս գանձիս կամ քարոզիս հեղինակն է Սովսէս ոմն, ինչպէս որ տնագլուխ տառքն ցուցնեն, որոյ առաջին և վերջի տներն աւելորդ սեպեցինք հոս դնել, անոնց մէջ Ս արգանանց յիշատակութիւն ջըլլալով. օրինակն 620 տարուան ձեռագրէ մը առնուած է, որ հեղինակին բաւական հնութիւնն այլ ցուցընէ։

Պոլիկտէտ առ Երևանոր։

(Տես երես 145)

Այդ անուամբ հասարակապետութեան սկիզբը ամէն տեսակ ատենակալութիւն կ'իմացուէր, ինչպէս նաև զօրավարները, և Դիկտատորը՝ գերագոյն Պրետոր կը կոչուէր։ 388 տարուոյն այս միաղոսը բացարձակապէս այն ատենակալին միայն վճռեցին՝ որ ամէն քաղաքացւոց դատը տեսնելու որոշուած էր։ Այս կարգադրութենէս առաջ սոյն հոգը հիւպատոսաց յանձն էր. բայց իրենք անդադար պատերազմներու պատճառաւ քաղաքին հեռու մնալու ստիպուած ըլլալով, այս պաշտօնիս համար մասնաւոր ատենակալ մը հաստատեցին. որով այս իշխանութիւնը հիւպատոսութենէ հատեալ մաս մը սեպուելով անանկ յարգ ստացած է՝ որ հիւպատոսի պատուին շատ կը մօտենայ։

Քաղաքին պարիսպներէն դուրս՝ Պրետորին առջևէն վեց նուիրակ կ'երթայ, իսկ քաղաքին մէջ երկու միայն. Եղրածիրանի պատմուճանը կը կրէ, ու գահաւորակի վրայ կը նստի, որուն վրայ նիշակ մը կայ՝ 'ի նշան իր ունեցած իրաւասութեան. իշխանութիւն ունի ծերակոյտը խմբելու, մեծ ակմբից նախագահ նստելու, և 'ի բացակայութեան հիւպատոսին անոր իշխանութիւնը լիովին 'ի գործ կը դնէ։ Երբեմն ալ պաշտօններու այնպիսի միաբանութեան մը պատճառաւ՝ որ միայն Հռոմ ծանօթ է, Պրետորը բանակներուն կը հրամայէ. ան որ Թէմիսի[1] գործի պիտոր ըլլար՝ յաղթութիւններ գլուխ կը հանէ, մինչդեռ անոր տեղ, զինուորական Տրիբուն մը վճիռներ կը կարդայ։

Երեք բառ կան որ Պրետորին բոլոր իրաւասութեան ընդմէջ կ'իմացուենեն. պամ, հրապարակ, վճռ.

1. Կ'երևի թէ հեղինակն կամ գրողն չփոթմամբ կու յիշէ հոս, Ս. Գրիգորիսի նահատակութեան դաշտը Վարդան, փոխանակ ըսելու Շաղարական կամ Արարական։

1 Գլ. Thémis.